

3567

792(47.925)

---

4-30



ԲՈՄԱՐՇԵ

Գինը 20 կոպ.

Հ. Ս. Խ. Հ. ԿԱՐՄՐԱԴՐՈՇ

ՍՈՒՋԻՆ ՊԵՏԹԱՏՐՈՆ

XIII բաժնաբաժան 1933—34

304

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# „ԽԵԼԱՅԵՂ ՈՐ ԿԱՍ ՖԻԳԱՐՈՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ“

ԿՈՍԵԴԻԱ 5 ԳՈՐԾ. 9 ՊԱՏԿԵՐՈՎ ՅԵՎ ԻՆՏԵՐՄԵԴԻԱՅՈՎ

Թարգմանություն Տ. ՀԱԿՈՒՄՅԱՆԻ

Բեմադրությունը վաստ. ռեժիսոր — Ա. ԳՈՒԱՍԿՅԱՆԻ

Արտաքին ձևավորումը — Մ. ԱՐՈՒՏՅԱՆԻ

Ռեժիսոր ասիստենտ՝ Գ. ԳԱՐԻԲԵԼՅԱՆ

Պարերը՝ Վ. Ի. ՊՐԵՄՅԱԿՈՎԻ

Յերաժշտությունը՝ 18-րդ դարի Ֆրանս. Կոմպոզիտորների գործերից:

Որկեսարովկան՝ Ա. ՍԱԹՅԱՆԻ

2004

## ԴՐ. ՍԻՄՈՆՅԱՆ

Առաջին Պետական կարմրադրու թատրոնը 1933-34 տ. թատերաշրջանում բեմադրելու յե Բոմառչեյի «Ֆիգարոյի ամուսնութիւնը»: Յեթե նշանավոր Ֆրանսիացու այդ հռչակավոր կատակերգութեան ընթերցումը Պուշկինի ժամանակաշրջանում «սե խոհեր» վանելու միջոց եր, ապա մեր ընթերցողի, մեր հանդիսականի համար նա մի ամբողջ եպոխտ պատկերող յերկ ե: Այդ այս եպոխտն է, յերբ հաստատում եր Ֆրանսիական Ժողովրդի պատմութեան դրամատիկական ակտերից մինը-1789 թվի հեղափոխութիւնը:

Բոմառչեն դրական տապաքեզ մտավ, փորպես Դիդրոյի գեղադիտական հայացքների կողմնակից: Դիդրոյի հետ միասին նա ծառայեց կեղծ-դասական, ազնւական փողբերգութեան դեմ: Նա եւս Դիդրոյի նման արմատի, և մասնավորապես դրամատիկական արվեստի համար պահանջում եր կյանքի ճիշտ արտացոլում, սեպականութիւն, բարոյագիտական նշանակութիւն: Հենված Դիդրոյի արվեստագիտական սկզբունքներին՝ Բոմառչեն դարձավ Ֆրանսական «Արտասվաբեր կոմեդիա»-յի ամենատաղանդավոր ներկայացուցիչը: «Արտասվաբեր կոմեդիան» յերրորդ դասի զավակն է: Նա առաջ յեկավ փորպես հակադրութիւն ազնւական փողբերգութեան, փոր XVIII դարի 30-ական թվականներից տիրապետող եր դարձել Ֆրանսիական բեմի վրա: Ազնւական փողբերգութեան նյութը պայտական կյանքն եր, հերոսները՝ կայսրներ ու թագավորներ: Ազնւական փողբերգութեան ինչպես բովանդակութիւնը, այնպես էլ ձևը՝ (յեռյակ միութիւնը) և դերասանական խաղը (արհեստական վեհապանծ ձայն, յերկայնաճիգ տոն, վսեմաշուք շարժումներ) համապատասխանում էին արիստոկրատիայի պաղամարտիկների դրական բմբռնումներին ու ճաշակին: «Ազնւական կեղծ կրասիկ փողբերգութիւնը Ֆրանսիական դասային միապետութեան մեջ տիրապետող ազնւականութեան պատկերն եր»: Հասարակական կյանքի սանդուխքով վեր յելնող բուրժուազիան յեր կարող հանդուրժել, փոր թատրոնը վերաբազրեր միայն դեպի անկում դիմող ազնւականութեան պատկերը: Նա պահանջ եր զգուս արգեն իր սեփական պատկերը ցուցադրելու: Գրականութեան, թատերական արվեստի հնացած բմբռնումները

դարձան վեճի և քննադատութեան տուարկա: Ֆրանսիական բուրժուազիայի իդեոլոգներն առաջադրեցին թատրոնում «միջին կարողութեան տեր» մարդկանց պատկերելու պահանջը: Այդ «միջին կարողութեան տեր» մարդիկ պատկանում էին «յերրորդ դասին», փորը յեր կարող դրավիչ և, Դիդրոյի արնահայտութեամբ, «խրատական» բան տեսնել ազնւական թատրոնում: «Յերրորդ դասի» սեփական թատերգութիւն ու թատրոն ունենալու պահանջին ամենից ավելի, տաղանդավոր կերպով քավարարութիւն տվեց Բոմառչեն իր կոմեդիաներով: Դրանք XVIII դարի Ֆրանսիական բուրժուազիայի ընդդիմադիր արամադրութիւնների լավագույն հայելին են:

Բոմառչեն վերջնական ջոխջախիչ հարված հասցրեց ազնւական փողբերգութեանն իր կեղծ դասական պայմանականութիւններով ու շարունով: Բուրժուական դրամատուրգիան «Ֆիգարոյի ամուսնութեամբ», Բոմառչեյի այս լավագույն ստեղծագործութեամբ հասավ իր դարգացման ամենաբարձր աստիճանին:

## Ո՞վ և Ֆիգարոն:

Նա «անհայտ ծնողների զավակն է»: Մինչև իր ամուսնութիւնը, փոր Բոմառչեյի տրիլոգիայի յերկրորդ մասի նյութն է հանդիսանում, Ֆիգարոն անցել է բազմաթիվ փորձութիւնների բովով: Այդ «անհայտ ծնողների զավակը» սփտված է բազմապիսի ընդունակութիւններով: Նա անսպառ յեռանդի տեր է: Իր անհայտ ծագումը, ազնւական կարգերն արգելակում են նրա առաջանալը կյանքում: Բայց նա ինքնավստահ է, իր ուժերին հավատող, և գործադրում է իր փայլուն հնարագիտութիւնը, փորպեսզի հաղթահարի իրեն ողակող հասարակական քաղաքական կյանքի պայմանները: Ֆիգարոն Բոմառչեյի տրիլոգիայում հանդես է գալիս իսպանական տարագով. այդ տարագով են հանդես գալիս նաև մնացյալ գործող անձերը: Բայց դրանք Ֆրանսիացիներ են, Բոմառչեյի ժամանակաշրջանի հասարակական հարաբերութիւնները կրող իսկական Ֆրանսիացիներ: «Սեփիլյան Սափրիչ»-ի մեջ մենք ծանոթանում ենք Ֆիգարոյի կյանքի յեյեկներին: Նա յեղել է «անտոնարույթ», ուսումնասիրել է «քիմիան», Փարմացիան, խիրուրգիան», փորձել է իր ուժերը դրամատուրգիայի մեջ, «գլխակորույս իրեն նետել է թատ-

րոն», յեղել է հրապարակախոս, հողված է դրել ֆինանսական հարցի մասին և այդ հողվածում արտահայտած կարծիքների համար բանտարկվել, թղթախաղային մի տան մեջ ծառայել և իրեն թուղթ բաժանող: Յեվ ահա նա բնկել է կոմս Ալմավիվայի տունը՝ վորպես սափրիչ, վորպես ծառա: Ֆիգարոն ձգտում է անկախության, բայց նրա անկախության խոչընդոտում են նյութական անապահովությունն ու ստորագրա դիրքը՝ հասարակության մեջ: Հակառակ այն բանի, վոր Ֆիգարոն խոսում է «ազնվություն» մասին, սակայն իր համար նյութական ապահով պայմաններ ու դիրք ստեղծելու համար նա դիմում է ինտրիգներին, վորովհետև նա գործ ունի ազնվականության հետ, վորի ներկայացուցիչն է Ֆիգարոյի տերը—կոմս Ալմավիվան: Ֆիգարոն իրեն ավելի բարձր է դասում կոմս Ալմավիվայից, վորն ստոր է, դուրի վորեն բարեմասնությունից և հիմար, բայց զորեղ, վորովհետև նա ազնվական է և հարուստ: Ֆիգարոն արհամարուհում է Ալմավիվային, իրեն նրա հետ համեմատելիս ընդգծում է իր խելքի, ունակությունների գերազանցությունը: Նա գիտե, վոր «ծնունդի քմահաճույքով մեկը կոմս է, մյուսը՝ հովիվ», գիտե, վոր «մահը մարդկանց հիշողությունից ջնջում է տասնյակ կոմսերի, վորոնց խունկ եյին ծլխում», բայց «մարդկանց հիշողության միջից չի ջնջվում խելքը, վոր ամեն ինչ կարող է փոխել» և անմահացնել մարդուն: Մինչդեռ տասնյակ և հարյուրավոր կոմսեր վաղուց են մոռացության փոշիով ծածկված Ֆիգարոյի համար անմահ է վոլթեռը, վորովհետև նա ունեցել է խորունկ միտք և ստեղծագործական հանճար:

Բոմառչեն Ֆիգարոյին, այդ «անհայտ ծագում» ունեցող խոլոք, սաղանդավոր ծառային հակադրում է ազնվական ապաշնորհ, վողորմելի կոմս Ալմավիվային: Հակառակ հասարակական դիրքեր ունեցող այդ յերկու դեմքերի մեջ բնթերցողը, հանդիպականը տեսնում են յերկու հասարակական նեհրակ շերտերի՝ «յերրորդ դասի» և ազնվականության բաղխումը, նրանց պայքարը: Այդ բաղխումը «Ֆիգարոյի ամուսնության» մեջ արտահայտվում է, կարծես թե, շատ պարզ սյուժեով: Ֆիգարոն ցանկանում է ամուսնանալ սպասուհի Սյուզանի հետ: Հեշտասեր Ալմավիվան խոչընդոտ է հանդիսանում այդ ամուսնություն: Այդ իրր թե «ազնվա-

բարո» կոմսը, վորն իր ամուսնության որր վերացրել եր «առաջին գիշերվա իրավունքը», ձգտում է տիրանալ Սյուզանին: Բայց անպաշտպան ծառայի և ֆեոդալական զորեղ իշխանի միջև ծագած բաղխումը վերջանում է Ֆիգարոյի հաղթությամբ: Իր խելքի, ճարպկության, սրամտության շնորհիվ Ֆիգարոյին հաջողվում է ազատել իր հարսնացուին հեշտասեր Ալմավիվայի ճանկերից և ամուսնանալ նրա հետ: Այս պարզ սյուժեյով Բոմառչեն Ֆիգարոյի շուրթերով ամենակծու հեղանանքի յե յենթարկում տիրող հասարակական կարգերը, հասկացողությունները, բարքերը: Ֆիգարոն դատապարտում է մարդու ծագման հետ կապված արտոնությունները:

«Միայն այն սխառճառով,—բացականչում է նա,— վոր դուք ազնվադարձ կոմս եք, դուք ձեզ մեծ հանճար եք համարում: Բարձր ծագումը, հարստությունը, ազնվական ծագումն ո՞ւմ գլուխն ասես, վոր պտույտ չբերեն: Բայց ի՞նչ եք դուք արել այսչափ բարիքներ ստանալու համար: Ծնվելու աշխատանք եք թափել և ուրիշ վոչինչ: Մնացյալ բոլոր բաներով դուք սովորական մարդ եք: Իսկ յես, սապանան տանի, աղքատ, գորշ ամբոխի մեջ կորսվածս, ինձ վիճակվեց գոյություն պահպանման համար այնքան գիտելիքներ և հնարամտություն ծավալել, վորքան չի ծավալվել մի ամբողջ դարի ընթացքում Իսպանիայի բոլոր վարչությունների մեջ, և դուք գեռ ցանկանում եք պայքարել իմ դեմ»: Այս տիրադը սնանկացած ազնվականության դատապարտությունն է:

Ֆիգարոն ազնվականության հետ մեկտեղ դատապարտում է նրա ստեղծած հիմնարկները, որենքը, դատարանը, մերկացնում է դատական պաշտոնների առուժախելիությունը, դատավորների կաշառակերությունը, ազնվական դիպլոմատիայի շատ թափանցիկ վողորմելիությունը: Ոոսելով որենքի մասին, Ֆիգարոն հեզնաբար խոսն բնութագրում է վորպես «գիշող՝ մեծ մարդկանց նկատմամբ և շատ անոգո՞ փոքր մարդկանց հանդեպ»: Դիմելով դատավոր Բրիգուադոնին, Ֆիգարոն սուր խայթով նկատում է «պարոն դատավոր, վստահում եմ ձեր արդարաստություն, թեպետ և դուք դատականներից եք»:

Ֆիգարոն համոզված է, վոր ազնվական կարգերում ճշմարտություն չկա: Նա կծու ծիծաղում է այն



36076-66

բանի վրա, վոր «մարդիկ սկսել են տարբերել հացաբ-  
տեսակի ճշմարտութիւնները»: Այս հանգամանքը Ֆի-  
զարոն վերագրում է այն բանին, վոր «վորոշ ժամա-  
նակից ի վեր հին հիմարաբանութիւնները դառնում են  
խելոք բաներ և հին ժամանակների պատ պատմաստ-  
ված ցնդաբանութիւնները վեր են ածվում մեծագույն  
ճշմարտութիւնների»:

Որենքի, դատարանի, Փետդալական հիմնարկների  
հետ մեկտեղ Ֆիզարոն մերկացնում, պարսափում է  
նաե քաղաքագիտութիւնը: Իր տերը փորձում է Ֆի-  
զարոյին ուսուցանել «քաղաքականութիւն» արվեստը:  
Ֆիզարոն դեն է չպրտում Ալմալիվայի այդ ցանկու-  
թիւնը: Նա չատ լավ է ըմբռնել այս «արվեստի»—Փեո-  
դալական քաղաքագիտութիւն եյութիւնը:

«Ձևացիր,— նկատում է Ֆիզարոն,—քե չգի-  
տես այն, ինչ հայտնի յե բոլորին, և գիտես այն,  
ինչ վոչ վոք գիտես. լսիր այն, ինչ վոչ վոք է  
հասկանում և մի' լսիր այն, ինչ լսում ես. ցույց  
տուր, վոր կարող ես ամեն ինչ անել, անգամ ու-  
ժերիցդ վեր, հաճախակի քազցրու, իբրև վե-  
ծագույն գաղտնիք, յերբ իրոք քեզ մոտ քազցնե-  
լի բան չկա: Փակվիր սենյակումդ և պարապու-  
թիւնից նորոգիր գրչածայրերդ: Ձևացիր խորի-  
մաստ, յերբ, եյապես, դու և' դատարկաբան ես,  
և' հիմար. վատ քե լավ քեզ ձևացրու. կարևոր  
անձ. բազմացրու լրտեսներին և աջակցիր սրի-  
կաներին: Յերբ այժմ սրձն կարիք լինի ավերցը-  
նել կնիքներ կտրելու և նամակներ բռնելու ար-  
վեստը, ապա այս ամենը լուսավորել մեծ սկզ-  
բումով, քե չնչին միջոցները արդարացվում են  
կարևոր նպատակով,—ահա և ձեզ—աստված  
վկա, ամբողջ քաղաքագիտութիւնը»

Բոժառչեն կատակերգութիւններով ազնվական  
հերոսին վոր իջեցրեց թատրոնի բեմից. նրան պտակա-  
գերծ արեց քաղաքանապես, մտավորապես ու բարոյա-  
պես. նրա տեղը հասկացրեց Ֆիզարոյին, այդ տաղան-  
դավոր parvenu-ին, վորը իր համար կյանքում ճա-  
նապարհ էր հարթում իր ուժերին, իր ունակութիւն-  
ներին չենլած, վորը միջոցների մեջ խորութիւն չեր  
գնում իր նպատակին հասնելու համար: Ֆիզարոն ընդ-  
գիմադիր է ազնվական հասարակութիւն հանդեպ. նա  
հեղհում է, ծաղրում այդ հասարակութիւնը, խայտա-

ռակում այն, մերկացնում նրա արատները, ցուցադ-  
րում նրա նեխածութիւնը, բայց նա ինքը հասարա-  
կական բարձր իդյալներ չունի: Նա ձգտում է Ալմալի-  
վայի տեղն ինքը բռնել, հասարակական սանդուխքի  
բարձր աստիճանին ինքը կանգնել: Նա արհամարհում է  
Ալմալիվային, վորովհետև նա տիրապետող է, հա-  
բուստ է: Բայց նա չի ձգտում վերացնել տիրապետու-  
թիւնն ու մասնավոր հարստութիւնը: Նա պատրաստ  
է յայդ Ալմալիվայի հետ խաղաղ կենակցութիւն յեզր  
գտնել, յեթե իրեն թույլ արվի արեւի տակ ապահով  
տեղ գրավել: Հակառակ դեպքում նա կպայքարի նրա  
դեմ. «Ախ, յեթե հաջողվի,—ասում է Ֆիզարոն,—  
խաբել այդ մեծ խաբեբային, և յուրացնել նրա վոս-  
կին»: Այսպես էր ինքը XVIII դարի Փրանսական բուր-  
ժուազիան: Այդ բուրժուազիայի պայքարը Փետդալական  
հասարակութիւն դեմ մղում էր իշխանութիւն մի ձեւ  
մի ուրիշ ձեւով, սեփականութիւն մի ձեւ մի այլ ձեւով  
փոխարինելու համար Բոժառչենի տրիլոգիայի յերրորդ  
մասում, Ֆեզարոն, հասարակութիւն մեջ զիրք ստեղ-  
ծած, ծերացած, չունի այլևս ընդդիմադիր տրամա-  
դրութիւններ, նա միայն խորհրդածում է վերացական  
առաքինութիւն և վերացական արդարութիւն  
մասին: Այդ իսկ պատճառով այդ յերրորդ մասը զուրկ  
է հասարակական-դեղարվեստական արժեքից:

Բոժառչենի տրիլոգիայի յերկրորդ մասը՝ «Ֆիզա-  
րոյի ամուսնութիւնը» գրական մի շանթ էր հեղափո-  
խութիւն նախորդակին: Տակավին վոչ վոք բեմից չեր  
հնչեցրել հին հասարակութիւնն տնդոքարար քննա-  
դատող այնպիսի հանդուգն խոսքեր, ինչպես Բոժառ-  
չեն: Անսահման էր դիտող հասարակութիւն հիացմուն-  
քը: Ռոսինին «Սեվիլյան Սափրիչի» սյուժեյից կերտեց  
իր անմահ ոպերան, իսկ Մոցարտը «Ֆիզարոյի ամուս-  
նութիւնը» դարձրեց իր ոպերայի նյութը:

Մեկ ու կես դարից ավելի յե անցել, ինչ առաջին  
անգամ բեմադրվեցին «Սեվիլյան Սափրիչի» ու «Ֆի-  
զարոյի ամուսնութիւնը»: Այնուհանդերձ այս յերկու  
կատակերգութիւնները, առանձնապես «Ֆիզարոյի  
մուսնութիւնը», պահպանում են իրենց թարմութիւն-  
նը, վորովհետև Բոժառչեն, այդ մեծագույն դրամա-  
տուրգը, գրանց միջոցով պատկերեց մարդկային պատ-  
մութիւն հետաքրքրական դարաշրջանից մեկը և պատ-  
կերեց այն փայլուն տաղանդով, բարձր դեղարվեստա-  
կանութիւնը, խոշոր վարպետի նուրբ վրձինով:

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧЕДЕННЫХ  
Академии Наук  
СССР

48

24

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ЭКОНОМИЧЕСКИХ  
НАУК  
Академии Наук  
СССР

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

|                                                                                                   |                                                     |
|---------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------|
| Կոմս Ալմավիվա, Գրանդ, Նահանգապետ                                                                  | Վալիկ Վարդանյան                                     |
| Կոմսուհի Ռոզին, Նրա կինը                                                                          | { Ռուզաննա Վարդանյու<br>յեվ Վ. Մելախյան             |
| Ֆիդարո, Կոմսի կամերդիները<br>և ամբողջի կառավարիչը                                                 | վաս. դեր. { Վ. Վաղարշյան<br>Գ. Ջանիրեզյան           |
| Սյուզան, Կոմսուհու 1-ին սպասուհին<br>և Ֆիդարոյի հարսնացուն                                        | վաս. դեր. { Արուս Վոսկանյան<br>Ս. Գաբազա            |
| Մարտին, Ամբողջի տնտեսուհին                                                                        | վաս. դեր. { Հ ա ո ս ի կ<br>վաս. դեր. { Ո. Գուլազյան |
| Բարտոլո, Բժիշկ                                                                                    | վաս. դեր. { Ավես Ավեսիայան<br>Լ. Մարյան             |
| Բազիլ, Կոմսուհու յերաժշտութիան դաստառ<br>Անտոնիո, ալբեպան, Սյուզանի հորեղբայրը և<br>Ֆանդուի հայրը | Գ. Գաբրիելյան<br>Հ. Ավագյան                         |
| Ֆանդու, Անտոնիոյի աղջիկը                                                                          | { Ա. Աբազյան<br>Մ. Պարոնիկյան                       |
| Քերուբինո, Կոմսի 1-ին մանկավարիչը                                                                 | { Գ. Ամբիկյան<br>Թ. Դիլանյան                        |
| Իոն-Գուաման-Բրիգոլազոն, դատավորն                                                                  | { Տ. Այվազյան<br>Ս. Աբեղյան                         |
| Դուբլ-Մեն, դատարանի քարտուղար                                                                     | Վ. Մարգուհի                                         |
| 1-ին դատավոր                                                                                      | Հ. Ասլանյան                                         |
| 2-րդ դատավոր                                                                                      | Ս. Ասլանյան                                         |
| Գրիպ-Սոլեյլ, յերիտասարդ հովիվ                                                                     | Ն. Գեվորգյան                                        |
| Պեդրիլիո, Կոմսի վորսորդը                                                                          | Ծ. Սամսիրանյան                                      |
| Սպասավոր, Կոմսի մոտ                                                                               | Ա. Շեքենց                                           |
| Դատական կատարածու                                                                                 | * * *                                               |

Ալգվազիներ, ծառաներ, գյուղացիներ, գեղջկուհիներ:

1652591

Պատկեր 2351 Գրական-8880 (բ) Տպած 1000

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԻԲԼԻՈՏԵԿԱ  
ՀԱՍՏԱՏՈՒՄ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԻԲԼԻՈՏԵԿԱ

2013

ՀՀ Ազգային գրադարան  
NL0012591

